# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի օգոստոսի 2-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԲՄԱՇՁԲ-24/105**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հավաքակայանի վերամբարձ-վերանորոգման արտադրամասի թեք տանիքի վերանորոգման, հարթ տանիքի ապամոնտաժման, պատուհանների փոխարինման և մոտոդեպոյի դարպասների, պատուհանների փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԲՄԱՇՁԲ-24/105 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Հրավերում և նախագծանախահաշվային փաստաթղթերում տեղի է ունեցել վրիպակ:

**Փոփոխության նկարագրություն:** Հրավերում և նախագծանախահաշվային փաստաթղթերում հետևյալ տողերը շարադրվել է նոր խմբագրությամբ.

- Հրավերի Հավելված 1.1 ծավալաթերթ-նախահաշվի 7-րդ տողում «բետոնից ծածկույթի քանդումը» փոխարինել «բետոնից մնացորդների հեռացում ծածկի վրայից» բառերով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի Տանիքի լայնական կտրվածք՝ Մ:100, (Չափագրություն)-ի գծագրում «և բետոն B20 դասի» փոխարինել «և բետոնե մնացորդներ » բառերով, ինչպես նաև Տանիքի կառուցման աշխատանքների մասնագրում «Հին պրոֆիլավոր թիթեղից՝ 0.70 մմ և բետոնից ծածկույթի քանդում» փոխարինել «Հին պրոֆիլավոր թիթեղից՝ 0.70 մմ և բետոնե մնացորդների հեռացում»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ